№ 199 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27 1899 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27 № 199

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվան 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Հոկտեմբերի 24-ին, երկար ու ծանր հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց

ՆՈՒՆԷ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ԱԼԱՎԵՐԴԵԱՆՑ

Հանգուցեալի որդիքը, փեսան՝ Գրիգոր Սարգսեան Կարախանեանցը և քոյրը՝ Նատալիա Միքայէլեան Տաղինեանց, հաղորդելով այս մասին ազգականներին և բարեկամներին, խոնարհաբար խնդրում են շնորհ բերել յուղարկաւորութեան, որ լինելու է հինգշաբթի, ամսիս 28-ին, առաւօտեան 10 ժամին, Քափանակեանցի տանից, Բէհբութեան փողոց, № 45 (նախկին Սաղօվայա) դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին։

Հոգեհանգիստը կը կատարվի չորեքշաբթի, ամսիս 27-ին, երեկոյեան 6 ժամին։ Թաղումը լինելու է Վերայի հանգստարանում։

2—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարոյական պահանջներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Ախալքալաքից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլօ-տրանսվաալեան պատերազմը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գերմանական համալսարանը և ուսանողութիւնը։

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Բազմաթիւ թղթակցութիւնների շարքում, որ մենք ստանում ենք, երբեմնապէս ստանում ենք և մտերմական նամակներ, որոնք նախազգուշացնում են մեզ զանազան հասարակական գործիչների խարդախութիւններից և այս կամ այն լուր տուողից, որ հակված է հաղորդել սուտ և հնարովի տեղեկութիւններ՝ լրագիրը մոլորեցնելու կամ յայտնի անձերին անուանարկելու նպատակով։ Անբարոյական վարմունքի այդ ստոր ձևը, դժբաղդաբար, չէ անհետանում մեր մէջ և իր արտայայտութիւններով մտնում է նոյնատեսակ վարմունքների մի ընդարձակ շրջանի մէջ, որ յայտնի է մեր հասարակութեանը։ Ձևական կերպով պահպանել ընտանիքի փայլը, իսկ գաղտնի թոյլ տալ մի շարք անբարոյական գործեր, գաղտնի կերպով կրակ տալ հարևանի տունը, հացը, խոտի դէզը, անստորագիր զրպարտութիւններ գրել այս կամ այն գործողի և հիմնարկութեան դէմ—դրանք նոր երևոյթներ չեն, այլ կազմում են մեր կեանքի հին ախտերից մէկը։

Կատարեալ դժբաղդութիւն է մի հասարակութեան համար, երբ նրա անդամները այդքան սխալ, այդքան սարսափելի թիւր հայեացք ունեն բարոյականութեան վրա։ Ի՞նչ կարելի է սպասել մի մարդուց, որ բարոյականութիւնը հասկանում է միայն ձևական կերպով և ամեն բան թոյլատրելի է համարում, քանի որ ինքը թագնված է, քանի ինքը չէ ճանաչված իբրև տէր տեղի ունեցած վատ վարմունքի։ Այդ տեսակ մարդկանց գոյութիւնը հասարակութեան մէջ կատարեալ ցաւ է, որովհետև նրանք երկար ժամանակ գործում են անպատիժ, իբրև գաղտագողի չարագործներ, իբրև արտաքին վայելչութիւնը պահպանող փարիսեցիներ։

Սակայն բարոյականութեան բարձր հիմունքները տարածելու համար ո՞վ է հոգում մեր հասարակութեան մէջ։ Հին սերունդը անկարող է ղեկավար հանդիսանալ իր զաւակների համար և կորցրել է իր հեղինակութիւնը։ Մեր հոգևորականութիւնը ոչ միայն չէ նպաստում ժողովրդի բարոյական զարգացման, այլ յաճախ փորձութեան չարաչար օրինակներ է հանդէս բերում ազգաբնակութեան առաջ։ Մեր դպրոցները դեռ շատ քիչ են թւով, և չեն ցրված երկրի խուլ անկիւններում։ Մեր հասարակական հիմնարկութիւնները շատ թոյլ են և չեն գրաւում ժողովրդի մեծ խաւեր։ Մեր մամուլը և գրականութիւնը միշտ էլ չեն գտնվել իրանց կոչման բարձրութեան վրա և նրանց մէջ տարիներ շարունակ գործել են մարդիկ, որոնք մոլորեցրել և անբարոյականացրել են հասարակութիւնը։ Մեր ինտելիգենցիան այնքան աննշան դեր է կատարում կեանքի մէջ, որ յաճախ նա ինքն է ազդվում իրականութիւնից, քան աշխատում է ազդել կեանքի վրա։

Ո՞վ պէտք է հոգայ թէ հասարակական և թէ անհատական բարոյականութեան զարգացման մասին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Մի քանի ամիս առաջ մենք բերինք ֆրանսիացի մի գրողի վկայութիւնները այն մասին, թէ ինչպէս Ֆրանսիայում ընկել է կաթոլիկութիւնը, ինչպէս նա դարձել է մի մեռած ձևականութիւն ոչ միայն զարգացած դասակարգերի, այլ և գիւղական ազգաբնակութեան համար։ Պապական կղերականութիւնը ազատ, հանրապետական Ֆրանսիայի համար միշտ եղել է մի չարիք, որի դէմ էլ կառավարութիւնը կռուել է և կռւում է խստութեամբ։ Բայց այդ կղերականութիւնը հեշտ ընկճվող չէ, և վերջին երկու երեք տարիների դէպքերը ցոյց տուին թէ նա դեռ որքան ոյժ ունի Ֆրանսիայում։ Այժմ «Богословскій Вѣстникъ» կրօնական օրգանը արձանագրում է այն երևոյթը, որ Ֆրանսիայում նոյն իսկ քահանայական դասակարգը հասկացել է Հռոմի բռնապետութեան չարիքները. ապացոյց—սա յիսուն կաթոլիկ քահանաներ դարձել են բողոքական պաստորներ։

Չէ անցնում ամիս, շաբաթ, որ քահանաներից մէկը դուրս չը գայ կղերի շարքերից. դա դեռ մեծ ցաւ չէ. ցաւն այն է, որ հովուի հետ հեռանում է և համայնքը։ Կաթոլիկութիւնը գեղեցիկ կերպով հասկանում է, որ իրանից հեռանում են լաւագոյն մարդիկ, որոնք չեն հանդուրժում եզուիտների սկզբունքներին, բայց նա անզօր է այդ շարժումը կանգնեցնելու համար, որովհետև անկողմնակալ և լաւագոյն կաթոլիկները վճռականապէս այդ շարժման կողմն են և խրախուսում են նրան հետևեալ նամակներով. «Մենք ցանկանում ենք ձեզ բախտ ձեր ձեռնարկած գործում և պատւում ենք ձեզ, իբրև առաջաւոր մարտնչողների։ Քաջաբար առաջ գնացէք»... «Մեր լաւագոյն քահանաների մէջ կատարվում է հետաքրքրական և խրատական շարժում։ Մենք ասում ենք լաւագոյն, որովհետև քահանաների մէջ քիչ չը կան և անտարբերներ, որոնց համար քահանայութիւնը—հացի փէշակ է... Սրանք միշտ կաթոլիկ կը մնան»։ Եւ ահա կաթոլիկութեան լուծը դէն գցած այդ փախստականներին պատսպարելու համար Պարիզում հիմնված են երեք պատսպարաններ, ուր նրանք կարող են կազդուրվել և ազատվել իրանց առաջնորդ եպիսկոպոսների հալածանքներից։

Իսկ Շվէյցարիայում, Հօլանդիայում, Իտալիայում և Ամերիկայում կազմվել են յանձնաժողովներ՝ այդ փախստականների համար գործունէութեան ուրիշ ասպարէզներ գտնելու նպատակով։ Բայց նշանաւոր է և այն, որ այդ հակակղերական շարժումը սկսվել է ու տարածվում է նաև Իտալիայի հոգևորականութեան մէջ։

Բաւական է մատնացոյց անել, որ Իտալիայում արդէն կազմակերպվել է հոգևորականութիւնից բաւական նշանաւոր մի կուսակցութիւն, որ բողոքում է պապականութեան բռնութիւնների դէմ և արդէն հեռացել է պապականութիւնից. իսկ թէ ինչպէս է վերաբերվում այդ բանին աշխարհական հասարակութիւնը, այդ շատ պարզ երևում է բոլոր հայրենասէրների իրանց ընտրողներին ուղղած կոչից, որի մէջ ուղղակի ասված է. «Հռոմի եկեղեցին մերժում է ամեն ինչ. Նա մերժում է

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԵՒ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ

Ֆրանսիացի գիտնական Ժիւլ Սիմօնը դպրոցի նշանակութեան մասին հետևեալ արդարացի միտքն է յայտնում. «Մի ազգ, որը լաւագոյն դպրոց ունի, նա առաջին ազգն է. եթէ այսօր չէ առաջինը, վաղը կը դառնայ»։

Այդ միտքն ուղիղ են ըմբռնել քաղաքակրթված բոլոր ազգերը, որոնք մեծամեծ միջոցներ են գործ դնում որ, որքան հնարաւոր է, կատարելագործեն իրանց դպրոցական հիմնարկութիւնները։

Նոյն ձգտումով տոգորված է այժմեան կրթական վարչութիւնը Ռուսաստանում։ Յայտնի է, որ այժմեան լուսաւորութեան մինիստրը ձեռնարկել է վերանորոգելու միջնակարգ դպրոցները և բարեփոխելու համալսարանները։

Միջնակարգ դպրոցները վերանորոգելու համար կազմված է մի առանձին մասնաժողով, որին պիտի մասնակցեն միջնակարգ ուսումնարանների հմուտ և փորձված ուսուցիչները, իսկ համալսարանների բարեփոխութեան համար ամառվայ վերջը Պետերբուրգում կայացաւ ռեկտորների և տեսուչների մի խորհրդակցութիւն։

Մենք ցանկանում ենք ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրել համալսարանական վերջին բարեփոխութիւնների վրա։ Ինչպէս երևում է լուսաւորութեան մինիստր պ. Բոգոլեպօվի հրատարակած շրջաբերականներից, ռեկտորների խորհրդակցութիւնը մի օրգանական պակասութիւն է մատնացոյց անում այժմեան համալսարանական կեանքում։ «Համալսարանների պրօֆեսորները, ասում է պ. մինիստրը, բոլորովին անջատված են ուսանողութիւնից. ոչինչ ներքին կապ չը կայ այդ երկու համալսարանական մարմինների մէջ։ Պրօֆեսորական կօլեգիան դարձել է մի չէզոք տարր, մի աստիճանաւորական դասակարգ, առանձնացած ուսանողութիւնից։ Ուստի պրօֆեսորները գրեթէ ոչինչ բարոյական ազդեցութիւն չունեն ուսանողութեան վրա։ Այդ պատճառով ուսանողութիւնը մատնված է իր ճակատագրին և այդ անփորձ և շուտ ոգևորվող տարրը անղեկավար նաւի նման տատանվում է կեանքի անխաղաղ ալիքների վրա։ Ուստի այնպէս պէտք է կազմակերպել համալսարանները, որ պրօֆեսորական կօլեգիան (համալսարանական խորհուրդը) և պրօֆեսորները բարոյական ազդեցութիւն ձեռք բերեն ուսանողութեան վրա, իրական ղեկավար դառնան և ուսանողութիւնը հեռու պահեն ամեն տեսակ փորձանքներից ու արկածներից»։

Չէ կարելի չը խոստովանել, որ պ. մինիստրի այդ խօսքերը մի դառն ճշմարտութիւն են պարունակում։ Վաղուց բացակայ է այն բարոյական ազդեցութիւնը, այն ներքին կապը, որ պիտի լինի պրօֆեսորական կօլեգիայի և ուսանողութեան մէջ, որոնք միասին մի համալսարանական ընտանիք պիտի կազմեն։

Կայ մի համալսարանական երկիր, ուր այդ ներքին, բարոյական կապն ամուր է և դարերի հոսանքի բովից անցկացած՝ կարծես անխորտակելի է թւում։ Համալսարանն այնտեղ մի խաղաղ, համերաշխ աշխատանքով ոգևորված ընտանիքի պատկեր է ներկայացնում։

Այդ երկիրը Գերմանիան է, որ իր համալսարանների կազմակերպութիւնով մինչև այսօր էլ օրինակելի է թւում բոլոր ազգերին։ Յայտնի է, որ գերմանական համալսարանների ազդեցութեան տակ ֆրանսիական faculté-ները հետզհետէ միանում և կազմում են համալսարաններ (université)։

Մօտ ժամանակներս Հէյդելբերգի համալսարանը իր համար նոր ռեկտոր ընտրեց սանսկրիտագէտ Օստհօֆ պրօֆեսորին։ Ուսանողութիւնը վաղեմի սովորութեամբ մի ջահատօնով (ֆակելցուգ) շնորհաւորեց իր առաջին ղեկավարի ընտրութիւնը։ Այդ առիթով Նորընտիր ռեկտորը մի ճառ *) ասեց։ Մենք ցանկանում ենք «Մշակի» ընթերցողներին հաղորդել Նորընտիր ռեկտորի յայտնած մտքերը համալսարանի և ուսանողութեան մասին, որ շատ հետաքրքրական են և ուսանելի։

«Իմ սովորական պարապմունքները, ասաց նա, այնպիսի բնաւորութիւն ունեն, որ ես միջոց չեմ ունենում շփվելու մեր ուսանողութեան բազմութեան հետ։ Սակայն գերմանական համալսարանի կեանքի մի գեղեցիկ առաւելութիւնը ես համարում եմ այն, որ աշխարհից հեռացած ուսումնականը իր առանձնասենեակից, պրօֆեսորը իր սահմանափակ լսարանից առաջ է կանչվում և նրանից պահանջվում է, որ ապացուցանէ, թէ նա շնորք ունի իր զինակիցների խմբի գլուխը կանգնելու»։

Եւ ահա՝ խորասուզված իր չոր մասնագիտութեան, սանսկրիտագիտութեան մէջ՝ այդ համեստ պրօֆեսորը, որի սովորական ունկնդիրների թիւը մի երկու տասնեակից աւելի չէ, «առաջ է կոչվում» ղեկավարելու գերմանական հնագոյն համալսարանը։ Եւ նրա արտասանած ճառից մենք տեսնում ենք, որ առանձնասենեակում փակված մասնագէտը ոչ միայն ժամանակից յետ չէ մնացել, այլ տոգորված է նրա լաւագոյն ձգտումներով։

Ամենից առաջ մարդու ուշադրութիւնը գրաւում է Նորընտիր ռեկտորի ճառի անկեղծութիւնը։ «Ես այնպիսիներից չեմ, ասում է նա, որ իմ սիրտս գաղտնիքների շտեմարան դարձնեմ»։ Եւ նա ամենայն անկեղծութեամբ բաց է անում իր սրտի վիշտն ու ուրախութիւնը, մատնացոյց է անում ժամանակակից ուսանողութեան պակասութիւնները, որոնցից նախազգուշացնում է իր ունկնդիրներին։

Ամենից առաջ պրօֆէսոր Օստհօֆի ճառից մենք եզրակացնում ենք այն համերաշխութիւնը, որ տիրում է այդ համալսարանում կառավարութեան, համալսարանական վարչութեան և ուսանողութեան մէջ, մի յատկութիւն, առանց որի անկարելի է խաղաղ և առաջադիմող համալսարանական կեանք։

«Հաւատացէք, յարգելի զինակիցներս, ասաց Նորընտիր ռեկտորը, որ եթէ ես շնորհապարտ եմ ինձ վիճակված ընտրութեանը և կառավարութեան յետագայ հաստատութեանը, ես տոգորված եմ դէպի ձեզ նոյնպիսի զգացմունքով. ուրախանում, անգամ պարծենում եմ, որ Հէյդելբերգի համալսարանի juventus studiosa—ուսանողութիւնը, ցնծացնելով ջահերը, միախառնում է իր «այո»-ն, իր «ամեն»-ը համալսարանական աւագների, մեր ճեմարանական ծերակոյտի խորհրդին, որը կարգաւորում է համալսարանական բոլոր գործերը»։

Այդպէս ուրեմն՝ համալսարանական խորհրդի ընտրած և կառավարութեան հաստատած ռեկտորը ուսանողութեան յարգելին է, նրա սրտին մօտիկ անձնաւորութիւն է. նրան ուսանողութիւնը հաւատ է ընծայում և, յայտնի բան է, ենթակվում է իր ռեկտորի բարոյական ազդեցութեանը։ Դա այն համերաշխութիւնն է, որին պիտի ձգտէ ամեն մի համալսարան։

Ինչ պայմաններ են հարկաւոր այդ ներդաշնակ համերաշխութիւնը գոյացնելու համար։

Այդ հարցին պատասխանելու համար պէտք է քննենք, թէ ինչ է գերմանական պրօֆէսորու-

---

*) Այդ ճառը տպված է նոյն համալսարանի տեղեկագրում։

առաջին ժամանակների կեանքի սրբութիւնը, հեզութիւնը, երկայնամտութիւնը, բայց երբէք չի հրաժարվի իշխանութիւնից, տիրապետութիւնից, անգթութիւնից և արիւնից։

Ռուսաց կրօնական օրգանը փորձում է բացատրել այդ երևոյթը և գալիս է այն եզրակացութեան, որ կաթօլիկութիւնը վերջացրել է իր կեանքը։

Աղճատելով Աստուծու խօսքը, աղճատելով քրիստոնէութիւնը, կաթօլիկութիւնը երկար փորձերի միջոցով աշխատել է աղճատել և մարդկային բնութեան կրօնական-բարոյական ամբողջութիւնը, փոխարինելով նրան կարգապահական և ծիսական հրամանագրութիւնների կապերով, շղթայելով մարդկային խիղճը և դարձնելով մարդու անձնաւորութիւնը հլու ոչնչութիւն այն մարդկանց ձեռքում, որոնք բաժանում են երկնքի արքայութիւնը կամայականութեամբ, փողով, նոյն իսկ խայտառակ գործերի համար, միայն թէ դրանք կատարվէին ի փառս սուրբ հօր։ Կաթօլիկութիւնը անբարոյականացրեց ընտանիքը և հասարակութիւնը և օգտվեց դրանով, որպէս զի հպատակեցնէ մարդկային ազգը. բայց ամեն բանի համար չափ կայ—կայ և մարդկային անշարժութեան համար. նրա մէջ էլ երբեմն ներս է խուժում թարմ հոսանք, որ տապալում է այն ամենը, ինչի մէջ մարդը անշարժացած է դարերի ընթացքում։

Որքան էլ վերապահումներով ընդունենք կրօնական օրգանի դատողութիւնները, չենք կարող չը համաձայնվել, որ կաթօլիկ աշխարհում տեղի ունեցող երևոյթները ունեն իրանց պատմական կարևոր նշանակութիւնը։ Կատարվում է այն, ինչ պիտի կատարվի ամեն դէպքերի համար անողոք օրէնքի պահանջով։ Պապականութիւնը, ինչպէս և ամեն մի ուրիշ քաղաքական կամ կրօնական մարմին, որ խուլ է ժամանակի պահանջների դիմաց, պիտի ենթարկվի քայքայման դրութեան։ Սա անխուսափելի է. մարդկային պատմութեան մէջ չը կայ օրինակ, որ հնութեան կապած հիմնարկութիւնները և հնութեան մոլեռանդ երկրպագուները կարողանան պահպանել իրանց դիրքը, ամբողջ նշանակութիւնը այնպիսի ժամանակ, երբ ամեն ինչ դէն է գցել հնութեան չապիկը, ընդունել է նոր կերպ, նոր կեանք։ Եւ իրաւ, պէտք է աչքի առաջ ունենալ, որ միմիայն XIX դարում Հռոմը անիծել է ամեն մի նոր երևոյթ, որ մարդկութեան կեանքի մէջ առաջին նշանակութիւն ունէր, նա ընդդիմացել է այն բոլոր ձևերին, բոլոր վարդապետութիւններին, որոնք խոր արմատներ են ձգել մարդկութեան մէջ։ Այդ հակառակութիւնը, այդ անհաշտութիւնը ժամանակակից իրողութիւնների դէմ չէր կարող անպատիժ թողնել Հռոմի կրօնապետութիւնը։ Եւ ահա նշանները երևան են գալիս։ Դրանք բողոքներ են այն ոգու դէմ, որ շարունակում է յամառութեամբ պահպանել կաթօլիկ կղերականութիւնը, մի ոգու, որ ջլատված, դժբաղդացած Սպանիա է ստեղծել, որ ամեն տեղ, ուր աջողութիւն է գտնում, տանում է ոչ թէ քրիստոնէական սէր և եղբայրութիւն, այլ չահամոլ հպատակներ, Հռոմի տիրապետութեան գաղափարները միայն։ Ահա դրա դէմ ենք մենք միշտ խօսել։ Կրօնական-դաւանաբանական տեսակէտով չենք մենք նայում կաթօլիկութեան վրա, այլ կուլտուրական, ընդհանուր մարդկային տեսակէտով։ Եւ այդ կողմից կղերականութեան անկումը Արևմտեան Եւրօպայում մենք նկատում ենք իբրև ճշմարիտ առաջադիմութեան յաղթանակ։

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Հոկտեմբերի 20-ին

Ինչպէս հեռագրել էի, հոկտեմբերի 18-ին, երեկոյեան ժամը մօտ 9-ից մինչև 11-ը, հրդեհը մի շարք խանութներ ոչնչացրեց մեր քաղաքում, որով բաւական զգալի վնաս տուեց թէ խանութների տէրերին և թէ մի քանի վաճառականներին ու արհեստաւորներին։ Այրված խանութները գտնվում են շուկայի փողոցում, հայոց եկեղեցու մօտը։ Բոլորովին այրվեցին 6 խանութ, որոնցից 2-ը պատկանում է Էջմիածնին, 2-ը՝ տեղական եկեղեցուն, իսկ 2-ը՝ մի չքաւոր պարոնի—Մկրտիչ Եաղուբեանին։ Բացի այդ՝ աւելի կամ նուազ վնասվեցին կրակից 4 խանութ, որոնք նոյնպէս պատկանում են եկեղեցուն, բայց որոնցով առայժմ օգտվում են տեղական ծխական դպրոցները։ Մի հինգ խանութի էլ մասամբ կտուրները քանդեցին, մասամբ դուռ ու պատուհանները ջարդեցին ոստիկանութեան հրամանով, որ հրդեհի առաջն առնվի դրանով։ Այդ հինգ խանութից 4-ը կրկին պատկանում են եկեղեցուն և գտնվում են ուսումնարանների տրամադրութեան տակ, իսկ մէկը, մի նորաշէն գեղեցիկ խանութ, պատկանում է նոյնպէս Մ. Եաղուբեանին։ Կրակը սկսվել է մի զինագործի խանութից, որ պատկանում է եկեղեցուն, և աստիճանաբար տարածվել է երկու կողմը։ Եթէ հրդեհը ուշ գիշերին պատահէր կամ քամի լինէր, անկասկած կայրվէին էջմիածնապատկան ամբարը, որ հիմա ժամանակաւոր աղօթատուն է, եկեղեցին, որի նորոգութեան վրա մինչև հիմա ծախսվել է մօտ 6000 րուբլի, թերևս ընթերցարանը և այլն։ Բայց, բարեբաղդաբար, եղանակը շատ հանդարտ էր։

Որքան պախարակելի է այն հանգամանքը, որ սկզբում թոյլ վերաբերվեցին հրդեհին, նոյնքան գովելի է այն մխիթարական երևոյթը, որ այրվող խանութների կտրին կանգնած խեղճ Մ. Եաղուբեանի յուսահատ աղաղակը և աղիողորմ լացն ու կոծը շարժեցին մի քանի անհատների սիրտը, որոնք օրինակելի և հերոսական անձնազոհութեամբ կռիւ մղելով կատաղի տարրի դէմ՝ վերջ տուին հրդեհին։ Հրապարակական գովասանքի արժանի այդ հերոսները, ինչ ասել կուզէ, քիչ բացառութեամբ, հասարակ արհեստաւոր դասակարգից էին։ Հրդեհը հանգցնելու մէջ անձնազոհութեան օրինակներ տուեց նոյնպէս և աստիճանաւոր Յովհաննէս Մեծատուրեան։ Ահագին խառնիճաղանճ ամբոխ էր հաւաքվել թէ երկու սեռի քաղաքացիներից և թէ մանաւանդ գիւղացիներից, որոնք մեծ թւով գտնվում էին քաղաքում զինուորակոչի պատճառով կամ՝ հրդեհը նկատելով վրա էին հասել շրջակայ գիւղերից։ Շատ գիւղացիներ, նոյն իսկ հայ—կաթօլիկներից, ասում՝ են, որ հեռուից կարծել են թէ եկեղեցին է այրվում, վրա հասան որ եկեղեցին ազատեն հրդեհից. այն ինչ՝ հարուստ քաղաքացիներից շատերը կրակից բաւական հեռու էին կանգնել, որ փորերի ճարպը չը հալվի…

Կային և դուխօբօրներ, որոնց ֆուրգոնները պէտք եկան ապրանքները խանութներից դուրս կրելու ժամանակ։ Օգնութեան հասան ոստիկանութիւնը, ձիաւոր չափարները, զօրօղօվօյները, մի երկու ջրկիր և մի փոքր ուշ՝ նաև զօրքը։ Մի առաջնորդող ձեռք չը կար. բոլորն էլ անփորձ էին. սովորական հարայ—հրոցը, գոռում—գոչիւնը, կանանց լաց ու կոծը աւելի շփոթում, վնասում էին՝ քան օգնում։ Օգնութիւն հասցնում էին թէ հրդեհը հանգցնելով և թէ ապրանքները դուրս կրելով։ Մի քանի աղքատ արհեստաւորներ մեծ վնաս կրեցին. օրինակ՝ մի գդակ կարողի մի քանի հարիւր հատ բուխարա մորթիները այրվեցին, մի հացթուխի բաւականաչափ ալիւրը վառվեց, մի մսավաճառի խանութում գտնվող ճարպը և այլն։ Ինչ վերաբերում է վաճառականներին, նրանք իրանց ապրանքը դուրս տանելով մագազիններից՝ ազատեցին հրդեհից, բայց, ի հարկէ, անվնաս չը մնացին. մեծ քանակութեամբ մանուֆակտուրային ապրանք տրորվեց ցեխի մէջ և գալանտերէյնի իրեղէններ ջարդ ու փշուր եղան. բացի դրանից՝ ի նախատինս մեր քաղաքի պէտք է ասել, որ յափշտակութիւններ էլ տեղի ունեցան։ Ինչպէս վերև ասացինք, ոմանք իրանց մերձաւորին օգնելու համար պատրաստ էին նոյն իսկ իրանց անձը զոհելու, իսկ ոմանք՝ օգտվելով այդ նոյն մերձաւորի դժբաղդութիւնից, նոյն իսկ թալան էին տալիս։

Միւս օրը ոստիկանութիւնը մի քանի կասկածելի տներ խուզարկեց և ապրանք հանեց այդ տներից… Վաճառականներից վնասվեցին գլխաւորապէս Դիլթեան եղբայրները և պարսկահպատակ Գ. Հասրաթեանն ու Ց. Դիլանեանը։ Միւս վաճառականները քիչ են վնասվել։ Ընդհանուր վնասի չափը դեռ չէ որոշված։ Ինչ ասել կուզէ, որ հրդեհից ապահովելը մեր խեղճ քաղաքացիք դեռ յիմարութիւն են համարում, և այրված խանութներից ոչ մէկը ապահովված չէր։ Բարեբաղդաբար, մարդկային զոհ չեղաւ. միայն մի 2—3 հոգի թեթև վնասվեցին։ Վնասված խանութները նորոգվում են՝ բացի Էջմիածնի և եկեղեցու խանութներից, որոնք յայտնի չէ, թէ երբ պիտի վերաշինվեն։

Ինչպէս տեսնում էք, հրդեհը հանգցրվել է ամենանահապետական ջանքերով։ Անցեալ տարի մեր քաղաքում պատահած մի հրդեհի առիթով «Մշակի» միջոցով խորհուրդ էի տուել մեր քաղաքային վարչութեանը, որ մի քանի հրդեհաշէջ մեքենաներ ձեռք բերէ։ Այն ժամանակ մեզ ասում էին, թէ Ախալքալաքում տասը տարին մի անգամ հրդեհ չէ պատահում, բայց և այնպէս մի քանի կացին, բահ, թի և այլն ձեռք բերին, որոնք այս հրդեհին բոլորն էլ կորան։ Բոլորս էլ համոզված ենք, որ եթէ մի քանի հարիւր րուբլի ծախսած և ջուր սրսկելու մեքենաներ ձեռք բերված լինէին և շատից-քչից պատրաստված հրդեհաշէջ սիրողներ ունենայինք, շատ հեշտութեամբ կարելի էր հրդեհը հանգցնել հէնց սկզբում և այնքան վնաս չէր լինի։ Բայց ոմանք ասում են, թէ նոյն Ալէքսանդրօպօլը կամ Ախալցխան այդպիսի բաներ չունեն, ուր մնաց թէ փոքրիկ Ախալքալաքը։ Կարծես թէ մենք պարտական ենք այդ քաղաքներին հետևելու։ Ալէքսանդրօպօլը և Ախալցխան ուրիշ այնպիսի բաներ ունեն, որ մենք չունենք, ինչու հապա չենք հետևում նրանց։ Ուրիշ տեսակէտից, նրանց հետևելով շատ բաներում, օրինակ՝ ընթերցասիրութեան կամ բարեգործութեան վերաբերմամբ և այլն, մեր քաղաքը պիտի յետ մնայ։ Ուրեմն օրինակ վերցնենք իսկապէս օրինակելի բաներից և մեզ չը մխիթարենք ուրիշի թերութիւններով։ Սակայն, ինչպէս լըսում ենք, այս հրդեհի ազդեցութեան տակ մեր քաղաքային լիազօրների հետևեալ ժողովում կը քննվի հրդեհաշէջ մեքենաներ ձեռք բերելու հարցը։ Դա աւելի լաւ է՝ քան ճոխ դիմաւորութիւններ սարքելը։

Սալլիմեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, հոկտեմբերի 26-ին

Խոնարհաբար խնդրում եմ թոյլ տալ ինձ զետեղելու ձեր լրագրի էջերում հետևեալ երկտողը։

Սրանից մօտ 15 տարի առաջ վախճանվեց Թիֆլիսում իմ ամուսին Ալէքսանդր Արարատեանը, որ յայտնի էր հայ գրականութեան մէջ իր բազմաթիւ գրուածքներով։ Շրջապատված լինելով նրա թողած որբերով և մեծ դժուարութեամբ կարողանալով իմ և որբերիս օրական ապրուստը հայթայթել, ես անկարող եղայ այս 15 երկար տարիների ընթացքում գոնէ մի հա-

---

թիւնը և ինչ պիտի լինի նա, ինչ է գերմանական ուսանողութիւնը, ինչ ձգտումներ պիտի ունենայ և թէ ինչ է այդ երկու մարմինների պարտաւորութիւնը իրանց պետութեան առջև։

Այդ բոլոր հարցերի պատասխանը գտնում ենք պրօֆէսոր Օստհօֆի ճառում։

«Գերմանական համալսարանական պրօֆէսորը, ասում է նա, ժամանակակից քաղաքակրթութեան մի իրատեսակ, կասեմ, զարմանալի երկօրակ էակ է, խցկված համաշխարհային և պետական կազմակերպութիւնների մէջ։ Որքան խօսքը պրօֆէսօրական կոչման յատուկ պարտաւորութիւնների վրա է, գերմանական պրօֆէսօրը պէտք է ձգտի ճշգրիտ կատարելու նրանց, նա պէտք է բարեխիղճ պաշտօնեայ լինի իր պետութեանը, ջանալով ոչ միայն յետ չը մնալու միւս պաշտօնեաներից, այլ անգամ նրանցից առաջ գնալու»։

Սակայն, ասում է պրօֆէսոր Օստհօֆը, գերմանական համալսարանական պրօֆէսորը բարձր պէտք է պահէ մի այլ բան։ Նա պէտք է պահէ և պաշտպանէ դասաւանդութեան և գիտական համոզմունքի կատարեալ անկախութիւն. դա այն կենսատու օդն է, որով շնչում է գիտութիւնը, առանց որի անկարող է գոյութիւն ունենալ գիտութիւնը և գիտական ստեղծագործութիւնը։ Դրանցից զրկված՝ համալսարանը նմանում է այն ձկանը, որը ջրից՝ նրա բնական կեանքի պայմանից դուրս հանած՝ թողած է աւազի վրա և մեռնում է։

Իր միտքը բացատրելու համար պ. Օստհօֆը բերում է Րիքարդ Րօթէ աստուածաբան պրօֆէսօրի օրինակը։ Կրօնական բուռն համոզմունքով տոգորված՝ այդ բարեպաշտ դասատուն իր գրական աշխատութիւններում և բանաւոր քարոզներում անդադար վերադառնում է իր համար սիրելի դարձած այն մտքին, թէ գիտութեան համար հարկաւոր է մտքի, հետազօտութեան և դասաւանդութեան կատարեալ ազատութիւն։ Ուզում է ասել, թէ այդ անձնաւորութեան մէջ միացած է խորին կրօնականութիւն և գիտական հետազօտութեան ու մտքի կատարեալ անկախութիւն, մի կանոն, որով պիտի ընթանայ քրիստոնէական քաղաքակրթութիւնը։

Ահա այդպէս պիտի լինի պրօֆէսօրի գիտական դաւանանքը, որին պիտի միակցէ անկեղծութիւնը։ Նոյն իսկ պրօֆէսօրական անունը այդ է նշանակում։ Գիտնական Պաուլսենի մեկնութեամբ պրօֆէսօր բառը ծագում է լատինական profiteri բառից, որ նշանակում է անկեղծութեամբ քարոզել իր համոզմունքը։ «Չը պէտք է թաքցնել լուսոյ ճրագը», ասաց քրիստոնէութեան մեծ հիմնադիրը, երբ իր աշակերտներին աշխարհի չորս կողմն ուղարկեց աւետարանի ճշմարտութիւնը քարոզելու։

Ուրեմն՝ ճշմարտութիւնը որոնել, ճշմարտութիւնը հետազօտել և նրան դասաւանդել, ահա գերմանական պրօֆէսօրի գլխաւոր պարտաւորութիւնները, նրա գործունէութեան ամենաէական կէտը, որ յաճախ խոչընդոտների է հանդիպում այնպէս՝ «ինչպէս լոյսը, ազատօրէն փայլելով իր բարձրութեան ճրագից, թափանցում է մութ անկիւնները և անհանգիստ անում նրանց, որոնք խաւարի մէջ են թաքնված։

Հասկանալի է, այդպիսի պրօֆէսօրը միշտ միջոց ունի ձեռք բերելու այն բարոյական ազդեցութիւնը, որի բացակայութիւնը նկատվում է, ինչպէս ասում է մինիստրի շրջաբերականը, Ռուսաստանի համալսարաններում։

Ի՞նչ է ուսանողութիւնը, ինչ նպատակ պիտի ունենայ նա ճեմարանական կեանքի ընթացքում, ինչ ձգտումների պիտի ծառայէ նա։ Այդ հարցերին էլ պատասխանում է պրօֆէսօր Օստհօֆը։

Ուսանող բառը (student), ասում է նա, ծագում է լատինական studere—ձգտել (streben) բառից, բայց ոչ streber (կարիերիստ) բառից։ Բացատրելով այդ սրամիտ բառախաղը և ունկնդիրներին նախազգուշացնելով (streber—կարիերիստութիւնից, որ ժամանակակից կեանքի ախտոտ հոսանքներից մէկն է, նա շարունակում է.

«Տեսականապէս դուք շատ լաւ գիտէք, թէ ինչ տեսակ ձգտումներից էք ստացել ձեր անունը. այդ է՝ սուրբ, ամենամաքուր և ազնուագոյն ձգտումն դէպի ճշմարտութիւն և բարոյական կատարելութիւն այն միջոցներով, որ մատակարարում է մեր համալսարանը։»

Ուսանողը ամենից շատ պիտի աշխատի, որ իր պարապմունքներով մշակէ ինքնուրոյն գիտական աշխարհահայեցողութիւն։ Եթէ ուսանողը չէ ձգտում դրան, այլ յարմարվում է այն պրօֆէսօրի հայեացքներին, որի մօտ ուզում է քննութիւն բռնել, դա չի լինի ուսանողի իսկական ձգտում, դա չի լինի ձգտում դէպի ճշմարտութիւնը streben, այլ կը լինի ձգտում դէպի կարիերիստութիւն, streber։

Այստեղ պրօֆէսօր Օստհօֆը մատնացոյց է անում ժամանակակից ախտը, որով վարակվել է սկսում և գերմանական ուսանողութիւնը։ Դեռ համալսարանական նստարանից ուսանողը աշխատում է նախապատրաստելու իր ապագայ կարիերան, հարթելու այն ճանապարհը, որով պիտի ընթանայ կեանք մտնելիս, հաճոյանալով այն զօրեղ և դիրքաւոր անձանց, որոնցից կախված է նրա ապագան։

Մի կողմից հաճոյանալով զօրեղին, միւս կողմից նա դառնում է ինքնահաւան, գոռոզ դէպի իր ընկերը, անհամբերող դէպի նրա աշխարհահայեցողութիւնը։

Այդ պակասաւոր յատկութիւններից նախազգուշացնելով իր ունկնդիրներին, ռեկտոր Օստհօֆը պարսաւում է անհամբերութեան մի վատթարագոյն տեսակը, ուրիշի կարծիքները խուզարկելը։ Բաւական է, որ ընկերը պատկանում է մի այլ դաւանութեան, կամ մի այլ եկեղեցու. դրանից իսկոյն եզրակացնում է, թէ նրանում պակասում է հայրենասիրութիւն, որի մենավաճառը ինքն է ներկայացնում։ «Պէտք է փախչել այդ տեսակ մտքերից, ասում է նա. միայն նա է ճշմարիտ ու արդարը, ով սովորում է ճշմարտութեան կորիզը գտնել նոյն իսկ հակառակորդի կարծիքի մէջ։ Այդ ընթացքով հետևող ուսանողը զերծ կը մնայ ժամանակի ախտերից, «այդ միակ առհաւատչեայ է խաւարի խորքերից դուրս գալու դէպի լոյս աշխարհ, դէպի կատարելութիւն, դէպի ճշմարտութիւն»։

Մենք ամփոփեցինք պրօֆէսոր Օստհօֆի գլխաւոր մտքերը։ Ամեն մի համալսարանի կեանքում պէտք է տարբերել երկու տեսակ եղելութիւնները՝ մէկը փոփոխական, ժամանակաւոր, առօրեայ. դրանք ամեն մի երկրում տարբեր են լինում, նայելով ժամանակին, երկրի կարգադրութիւններին և ժողովրդի բնաւորութեանը։ Բայց կան մի շարք եղելութիւններ, որոնք յատուկ են ամեն մի համալսարանի, որ երկրում էլ լինի նա։ Այդ երկրորդ տեսակի եղելութիւնները համալսարանի հոգին և մարմինն են կազմում։

Առանց դրանց համալսարանը թառամում է և յաճախ պահպանելով լոկ անունը, էապէս մեռած է լինում նա, կամ նիրհած։

Կարծում ենք, որ «Մշակի» ընթերցողին դժուար չէ եզրակացնել, որ պրօֆէսոր Օստհօֆի մատնացոյց արած յատկութիւնները վերաբերվում են համալսարանի յաւիտենական, մնայուն, նրան շունչ ու կենդանութիւն տուող եղելութիւններին, որոնց գոյութիւնը համալսարանում ապահովվում է նրա խաղաղ և արգասաւոր կեանքը, ինչպիսի կեանք, որ յիրաւի ունեցել է Հէյդելբէրգի համալսարանը։

Կար. Եաղուբեան

Բագու.

մեստ քար դնելու իմ դժբաղդ ամուսնու գերեզմանի վրա: Յուսալով, որ հայ ընթերցող հասարակութեան մէջ ապրում են դեռ ևս մինչև այսօր էլ հանգուցեալ գրողի յարգողներից, սրանով համարձակութիւն եմ առնում դիմելու ձեր լրագրի միջոցով և հրաւէր կարդալու այդպիսիներին, որ աջակցեն ինձ իրանց լումաներով՝ մի համեստ քար դնելու հայ գրականութեան մեր մշակներից մէկի անշուք գերեզմանի վրա:

Նուէրները խնդրում եմ ուղարկել ինձ հետևեալ հասցէով. Тифлисъ, Ѳоминая ул., № 15, д. Давришева.

Այրի Շ. Արարատեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» երէկվայ համարում մենք հաղորդեցինք այն բացատրութիւնը, որ դրամական տագնապի առիթով պաշտօնապէս հրատարակեց ֆինանսների մինիստրը: Այժմ կարող ենք աւելացնել, որ մինիստրը ձեռնարկել է և գործնական միջոցների՝ մաքառելու բօրսային այն խաղերի դէմ, որոնք նպատակ ունեն արհեստական կերպով վայր գցել արժեթղթերի գները և այդպիսով առաջ բերել դժուարութիւններ արդիւնագործութեան համար: Մինիստրը հրաւիրեց իր մօտ նշանաւոր բանկերի ներկայացուցիչներին, պարզեց Ռուսաստանի ֆինանսների վերաբերութեամբ եղած բոլոր տեղեկութիւնները և առաջարկեց միահամուռ ուժերով մաքառել բօրսային խաղերի դէմ: Կազմվեց մի մասնաժողով, որի մէջ մտան պետական բանկի դիրեկտոր բարօն Պլեսկէ, միջազգային, Վոլժսկո-Կամսկի, փոխատու, ռուսաց արտաքին առևտրի կոչված և Վավելբերգի բանկային գրասենեակի ներկայացուցիչները: Մասնաժողովը պէտք է հետևի բօրսայի կեանքին և զեղծումների առաջն առնի:

—

Թիֆլիսի քաղաքային դուման իր վերջին նիստում, քննութեան ենթարկելով բոլոր այն առաջարկութիւնները, որ արված էին զանազան ֆիրմաների կողմից Թիֆլիսի ձիաքարշը վերցնելու նպատակով, գտաւ նրանց աննպաստ և այդ պատճառով որոշեց կրկին տալ ձեռնարկութիւնը բելգիական անոնիմ ընկերութեան:

—

Ներքին գործերի մինիստրութեան նոր կառավարիչ Դ. Սիպեագինի մասին մայրաքաղաքի լրագիրները խօսում են իբրև փորձված և խոհուն անձնաւորութեան մասին: «Россія» լրագիրը ասում է. «Սիպեագին միշտ մօտիկից շփվել է ժողովրդի իրական կարիքների հետ, ուստի նա միշտ նայում է գործերին իրական կեանքի պահանջների տեսակէտից: Կուրլիանդիայի նահանգի կառավարիչ եղած ժամանակ նա բարձր էր պահում ռուսաց դրօշակը, չը մոռանալով հին ռուսական համբերողութիւնը՝ թէ քաղաքական և թէ կրօնական:» «Новое Время» լրագիրը յայտնելով, որ նա անցել է պետական ծառայութեան բոլոր աստիճանները, սկսած փոխ-նահանգապետից մինչև մինիստրի պաշտօնը, ասում է, որ ներքին գործերի մինիստրութեան նոր ղեկավարը մօտ ուսումնասիրել է Ռուսաստանը, նրա հասարակական գործունէութիւնը և վարչական մեքենան:

—

Թիֆլիսի քաղաքային դուման ընտրեց դումայի նախագահող այն դէպքերում, երբ պէտք է բացակայէ քաղաքագլուխը, ձայնաւոր Կ. Ալիխանովին:

—

«Figaro» լրագրում Վալֆրէյ՝ ռուսաց արտաքին գործերի մինիստր կոմս Մուրավիևի Պարիզից մեկնելու առիթով, ասում է, որ անշուշտ կոմս Մուրավիև, Պարիզում երեք շաբաթ անցկացնելուց յետոյ, կարող էր համոզվել, որ ֆրանս-ռուսական դաշնագրութիւնը ամրապինդ է: Այդ դաշնագրութեան վիճակված է ամենամօտ ապագայում գործունէութեան լայն ասպարէզ: Առ այժմ կառավարութիւնները լռում են, բայց ժողովուրդը սկսում է բարձրաձայն բողոքել Անգլիայի քաղաքականութեան դէմ: Այժմեան դէպքերում՝ ֆրանս-ռուսական դաշնագրութիւնը ամենաօգտաւէտ և անհրաժեշտն է:

—

ՍՂՆԱԽԻՑ մեր թղթակիցը գրում է մեզ. «Нов. Обозрѣніе» լրագրի 1897 թ. յունվարի 18-ի համարում տպված էր Սուրամի հայոց եկեղեցու նախկին երէցփոխ Ստեփան Գրձելեանի նամակը, որով նա մեղադրում էր Սուրամի ոստիկանական պրիստաւին, որ վերջինը Ջրօրհնէքի օրը ստիպել էր հայ քահանաներին՝ շուտով վերջացնել Ջրօրհնէքի հանդէսը: Այս հարցի էութիւնը մենք պարզել ենք «Մշակի» 1897 թ. № 63 մէջ Սուրամից գրած մի նամակով: Պրիստաւ Տէր-Յակովբեանը այս նամակի առիթով բողոք տուեց Գրձելեանի դէմ դատաստանական պալատին, որը, քննելով անցեալ մարտ ամսի 23-ին այս գործը, դատապարտեց Գրձելեանին դիֆամացիայի համար երկու ամիս բանտարկութեան: Գրձելեան գործը անցկացրեց կառավարիչ սենատը, որը քննեց հոկտեմբերի 5-ին: Սենատը փոխեց պալատի վճիռը, ենթարկելով Գրձելեանին միմիայն 25 ր. տուգանքի: Այս գործի առիթով Գրձելեան բողոքել էր քահանաների դէմ էջմիածնի սինոդին, բայց սինոդը մինչև օրս չէ արձակել վճիռ:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼՕ-ՏՐԱՆՍՎԱԱԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

—

«Berl. Tageblatt» լրագրի զինուորական աշխատակիցը մեծ հմտութեամբ բացատրում է այն փոխադարձ դրութիւնը, որի մէջ գտնվում են անգլիացիները և բօէրները, և դրանից շատ աննպաստ հետևանքներ է հանում անգլիացիների համար:

Անգլիացիները, ասում է նա, նախ և առաջ սխալվեցին այն բանում, որ միաժամանակ առաջ քշեցին և պատերազմական դրութեան մէջ դրին իրանց բոլոր զօրաբաժինները: Պատերազմական գործողութիւնները լեռնացքներում ենթակայ են միշտ անսպասելի սիւրպրիզների: Անգլիական զօրագնդերի դրութեան անյարմարութիւնները Գլէնկէի, Դենդիի և Էլանդսլաագտէի մօտ՝ բաց արին ռազմական դռները տրանսվաալեան և օրանժեան հանրապետութեան զօրագնդերի առջև, այնպէս որ այդ զօրագնդերը կարողացան միանալ, և այդ միութիւնը այժմ կատարված փաստ է:

Բօէրները այժմ անգլիական հողի վրա են կանգնած. նրանք իրանց ձեռքն են գցել անգլիական երկաթուղիները դէպի Գարիսմիտ և Նիւկէսալը. նրանք Լէդի-Սմիտի մօտ իրանց շրջապատել են ամրութիւններով. նրանք հնարաւորութիւն ունեցան պաշտպանութեան համար գրաւել բոլոր անցքերը և դրանով ապահովեցին իրանց համար պաշտպանողական դրութիւն անգլիական հողի վրա շատ նպաստաւոր պայմաններով: Այդ պատճառով անկասկած է, որ անգլիացիները ներկայումս պատերազմական շատ վատ դրութեան մէջ են գտնվում: Պատերազմը անպատճառ կը ձգձգվի: Անգլիան ստիպված կը լինի անդադար լրացնել իր ուժերը Հարաւային Աֆրիկայում: Նա դրանով կը թուլացնի թէ մայր երկիրը և թէ կօլօնիաները: Եթէ այդ ճգնաժամի մէջ Անգլիային չօգնի եւրոպական պետութիւններից որ և է մէկը, Տրանսվաալը նրա համար այն կը դառնայ, ինչ որ էր մի ժամանակ Սպանիան Նապոլէօնի համար: Յամենայն դէպս բօէրների դէմ պատերազմը կը ջլատի Անգլիայի պաշտպանողական ուժը և կը պատառի այն ցանցը, որ նա տարածել է ամբողջ աշխարհի վրա:

«Times» լրագրի թղթակիցը հոկտեմբերի 16-ից Լէդի-Սմիտից հեռագրում է հետևեալը. «Բօէրների զօրագնդերը շարունակում են հաւաքվել Լէդի-Սմիտի մօտ, կիսաշրջան կազմելով: Նրանք բանակ են դնում, դիրքեր են պատրաստում իրանց թնդանօթների համար, բայց յարձակում գործելու տրամադրութիւն չեն ցոյց տալիս, թէպէտ ակներև է, որ դիտաւորութիւն ունեն կտրել մեր հաղորդակցութիւնը Պիտէրմարիցբուրգի հետ: Երէկ նրանց յարձակման նպատակակէտը կարծես Պիտէրս կայարանն էր, բայց նրանից ներքև նրանց ճանապարհը կտրեց գեներալ Ֆրէնչ: Դժուար է որոշել բօէրների թիւը, բայց երևի նրանք կազմում են 15-ից մինչև 18 հազար մարդ, հաշւելով դրանց մէջ և Օրանժեան հանրապետութեան ուժերը: Լէդի-Սմիտի համար երկիւղ կրելու հիմքեր չը կան: Ասում են, որ Օրանժեան հանրապետութեան զօրաբաժիններին աւելացան այն ուժերը, որոնք հսկում էին բազուտների վրա: Լէդի-Սմիտը հանգիստ է, և առօրեայ կեանքը իր սովորական ընթացքումն է գնում: Վիրաւորվածները, որքան այդ հնարաւոր է, երկաթուղիով ուղևորվում են դէպի Պիտէրմարիցբուրգ, և ձեռք են առնված անհրաժեշտ նախազգուշութիւններ այն դէպքում, եթէ քաղաքը պաշարվի: Լէդի-Սմիտը կիսաշրջանի մէջտեղն է գտնվում, որի առջևից բարձրանում են բլուրներ, այն ինչ մեր երկու թևերը բնական պաշտպանութիւն ունեն լեռնաշղթաներում, որը կտրվում է Կլիպ գետով: Ժուբէրի գլխաւոր բանակը գտնվում է մեզանից 10 կիլօմէտր հեռաւորութեան վրա, Վենտսլաագէրում:»

Ուրիշ լրագիրների խօսքով, բօէրները քանդեցին այն գլխաւոր խողովակները, որոնք ջուր էին մատակարարում Լէդի-Սմիտին, այնպէս որ անգլիացիները սրանից յետոյ պէտք է ջուր վերցնեն Կլիպ գետից. քաղաքում նոյնպէս վեց նոր ջրհորներ են փորված: Բօէրներին աջողվեց ապա խլել անգլիացիներից հազարից աւելի ջորիներ, սաստիկ թուլացնելով նրանց փոխադրական ուժերը:

Հօլանդական գեներալ Բէֆ-Պորտուգալ իր խորհրդածութիւններն է անում անգլօ-տրանսվաալեան պատերազմի ելքի մասին: Նրա կարծիքով, վերջնական յաղթութիւնը Տրանսվաալի կողմը չէ լինելու: Բօէրների զօրքին—ասում է նա—պակասում է լաւ կազմակերպված զօրքի հիմնական յատկութիւնը—կարգապահութիւնը: Զօրքը առանց կարգապահութեան զօրք չէ, այլ անկարգ օրդու: Բօէրները ունեն լաւ հրացանաձիգ զինուորներ, համարձակ ձիավարներ, կլիմային և զրկանքներին դիմացող քաջ մարդիկ, որոնք ոգևորված են իրանց հայրենի օջախը և իրաւունքները պաշտպանելու գաղափարով,—մի խօսքով, բօէրների տրամադրութեան տակ են գտնվում ժողովրդական զօրքի ամենալաւ տարրերը: Անգլիացիների համար, ի հարկէ, հեշտ չէ կռիւ մղել բօէրների դէմ. նրանք կարող են զգալի կորուստներ կրել, բայց դա չի ստիպի նրանց հրաժարվելու կռւից, իսկ եթէ պատերազմը ձգձգվի, բօէրներին դժուար կը լինի միասին պահել: Այնտեղ, ուր չը կայ զինուորական հրամանատարի երկաթէ բացառական կամքը, ուր իւրաքանչիւրը իրաւունք ունի կարծիք յայտնելու, վերջ ի վերջոյ պէտք է շփոթ և տարաձայնութիւն սկսվի: Երբ բօէրները ստիպված կը լինեն կանոնաւոր պատերազմին մասնակցել և հաւաքել իրանց բոլոր ուժերը անգլիական զօրքի գլխաւոր ուժերի դէմ, նրանք չափազանց մեծ կորուստներ կունենան, եթէ ոչ կատարեալ պարտութիւն, որովհետև նրանց հրամանատարները սովոր չեն ղեկավարել պատերազմական մեծ ուժերը, տակտիկա համարեա չը գիտեն, իսկ ստորադրեալները անպէտք են կանոնաւոր պատերազմի համար: Եթէ տրանսվաալեան երկրի յատկութիւնները թոյլ կը տան խուսափել մեծ պատերազմից, այն ժամանակ ուրիշ բան է, բայց Պորտուգալին այնու ամենայնիւ վախեցնում է դիսցիպլինայի բացակայութիւնը տրանսվաալեան զօրքի մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լօնդօնից, հոկտեմբերի 20-ից, հեռագրում են «Новости» լրագրին. «Լօնդօնում սաստիկ յուզմունք է տիրում: Լրագրավաճառները երէկ առաջին անգամ աղաղակում էին փողոցներում՝ «Դժբաղդութիւն բրիտանական զօրքի հետ»: Զինուորական մինիստրութեան մէջ ժողովվել էր ահագին բազմութիւն. ամենքն էլ աշխատում էին ձեռք բերել կոտորվածների ցուցակը: Գաւառներից գալիս են Լօնդօն՝ տեղեկութիւն ստանալու իրանց բարեկամների մասին: Պաշտօնական հեռագիրներին ոչ ոք հաւատ չէ ընծայում: Կարծում են, որ սպանվածների և վիրաւորվածների թիւը աւելի է, քան հաղորդված է պաշտօնական հեռագիրների մէջ: Լէդի-Սմիտում գտնվող անգլիական զօրքի ձախ թևը բոլորովին ոչնչացրված է: Իրլանդական հրացանաձիգ զօրքը, գլօստերեան գունդը և լեռնային թնդանօթաձիգ զօրքերը, նախ քան թշնամու ձեռքն ընկնելը, կոտորվել են բազմութեամբ: Մեծ կորուստներ են ունեցել նաև յետ նահանջող զօրքերը: Վիրաւորված են շատ օֆիցերներ: Լօնդօնի օֆիցերների ժողովարանում ասում են, որ բրիտանական զէնքը 120 տարվայ ընթացքում այսպիսի հարուած չէ կրել: Լօնդօնում երկիւղ են կրում Հարաւային-Աֆրիկայի ընդհանուր ապստամբութիւնից, մինչև անգամ կարծում են, որ կապստամբվեն Սուդանը և Եգիպտոսը: Ամենքն էլ մեղադրում են գեներալ Ռայտին նրա ինքնահաւանութեան համար:»

—Չը նայած գերմանական մամուլի բողոքին, Վիլհելմ կայսրը վճռականապէս որոշել է Անգլիա գնալ: Կայսրը հաւատացնում է իր շրջապատողներին, որ նրա այցելութիւնը ոչ մի քաղաքական նշանակութիւն չի ունենայ և չէ կարող ազդել Գերմանիայի ապագայ քաղաքականութեան վրա: «Այս այցելութիւնը, յայտնել է Վիլհելմ II-ը, ոչ թէ գերմանական կայսրն է անում անգլիական թագուհուն, այլ թոռը, որ ցանկանում է գրկել իր տատին, որին նա չէ տեսել չորս տարի»:

—Արտասահմանի լրագիրները ասում են, թէ երբ որ Տրանսվաալի կառավարութիւնը ստացաւ Անգլիայի վերջին ուլտիմատումը, նախագահ Կրիւգեր հրամայեց անմիջապէս հեռագրել Օրանժեան հանրապետութեան նախագահին և բոլոր գլխաւոր հրամանատարներին միմիայն մէկ խօսք—«Oorlog», որ հօլանդերէն նշանակում է պատերազմ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

25 հոկտեմբերի

ԼՕՆԴՕՆ: «Րէյտէրի գործակալութիւն»: Առաւօտեան լրագիրներին հաղորդում են Լէդի-Սմիտից, հոկտեմբերի 22-ից հետևեալը. «Բեստերսի մօտ տեղի ունեցած ճակատամարտի վերջում, բօէրները շուտով փախան, թողնելով պատերազմի դաշտի վրա շատ սպանվածներ ու վիրաւորվածներ: Անգլիացիների ռումբերի կրակը սաստիկ ներգործութիւն էր անում: Ամբողջ բանակը պաշարներով անգլիացիների ձեռքն ընկաւ:

Պիտէրմարիցբուրգից հեռագրում են հոկտեմբերի 22-ից: Այստեղի աֆրիկանդերները տեղեկութիւն ստացան, որ հոկտեմբերի 21-ին Լէդի-Սմիտի և Կօլէնզօի միջև տեղի է ունեցել մի արիւնահեղ կռիւ, որտեղ ընկել են շատ բօէրներ, որոնց թւում այստեղի աֆրիկանդերների շատ բարեկամներ: Պիտէրմարիցբուրգի անգլիացի բնակիչներին տեղի ունեցած պատերազմի մասին ոչինչ յայտնի չէ:

ԿՕԼԷՆԶՕ, հոկտեմբերի 22-ին. «Րէյտէրի գործակալութիւն»: Առաջ ուղարկած պահակները հանդիպեցին մօտաւորապէս 2000 մարդուց բաղկացած զօրաբաժնին, բայց առանց թնդանօթների: Բօէրների պահակները, սկսելով անգլիացիների հետ հրացանաձգութիւն, յետ քաշվեցին դէպի իրանց գլխաւոր ուժերը: Անգլիացիների կողմից սպանված է մէկը, բօէրները կորցրին երկու մարդ:

ՏՈՒԼԻ, Րօդէզիում: Հոկտեմբերի 15-ին անգլիական պահակները գերի վերցրին Պօրտդրիֆտի մօտ հինգ բօէրներին: Կարծում են, որ բօէրների գլխաւոր ուժերը յետ նահանջեցին դէպի հարաւ, թողնելով փոքր զօրախմբեր: Հոկտեմբերի 17-ին, Պօրտդրիֆտի մօտ տեղի ունեցաւ եռանդուն հրացանաձգութիւն խուզարկու զօրաբաժինների մէջ: Սպանված է մէկ անգլիացի, վիրաւորված են չորս մարդ:

ԴՈՒՐԲԱՆ: «Րէյտէրի գործակալութիւն»: Նոր գունդ կազմակերպելու համար դիմում են կամաւորներին, որոնց հրամանատարներ կը նշանակվեն կանոնաւոր զօրքերի օֆիցերները:

Պաշտօնական լուրերին նայելով, գնդապետ Կարլտօնի զօրախմբից անհետացել են 843 մարդ, սպանվել են 52 հոգի և 150 մարդ վիրաւորվել են:

ԿԱՊՇՏԱՏ, հոկտեմբերի 22-ին: Մեֆկինգից ստացած տեղեկութիւններին նայելով, բօէրները Պրէտօրիայից բերեցին և դրին Մեֆկինգից եօթը մղոն հեռաւորութեան վրա մի մեծ թնդանօթ: Նրանք մինչև այժմ նրանից արձակել են 11 անգամ, և նրանցից միմիայն մէկն է ընկել քաղաք և հրդեհել մի խանութ, որը և այրվել է: Պահակ զօրքը բոլորովին ապահով է և չէ սպասում յարձակման յետևից:

ԿՕԼՍԲԵՐԳ: «Րէյտէրի գործակալութիւն»: Հոկտեմբերի 22-ին ձիաւոր ոստիկանութիւնը թողեց քաղաքը և ճանապարհ ընկաւ դէպի Նէուպօրտ: Օրանժ-Րիվեր տեղից ստացված հեռագիրը հաղորդում է, որ չորեքշաբթի, երեկոյեան, Կիմբերլէում ամեն ինչ խաղաղ էր: Քաղաքի վրա յարձակումը սպասվում էր օրէցօր:

ԻՍՍԿՕՐՏ: հոկտեմբերի 22-ին: «Րէյտէրի գործակալութիւն»: Բօէրները շարունակում են ռմբակոծել Լէդի-Սմիթ, պատճառելով քիչ վնաս: Ծովային թնդանօթներին աջողվեց բոլորովին փչացնել բօէրների քառասուն փունտանոց թնդանօթները՝ Գեպվօրտ բլրի վրա: Երէկ հարաւային կողմում խուզարկութեան ժամանակ՝ անգլիական հեծելազօրքը յարձակում գործեց թշնամու վրա, որին մեծ վնաս հասցրեց:

ԼՕՆԴՕՆ: Հոկտեմբերի 24-ին զինուորական մինիստրութիւնը պաշտօնական հեռագիր ստացաւ, որից երևում է, որ Կիմբերլէում բոլոր վիրաւորվածները լաւ են: Գեներալ Բուլլերի հեռագիրը հաղորդում է Լէդի-Սմիտից աղաւնու պօստով ստացած հեռագիրը, հոկտեմբերի 22-ից, որի համաձայն նախորդ օրը գեներալ Ֆրէնչ դուրս է եկել հեծելազօրքով և դաշտային թնդանօթներով և աջողութեամբ ռմբակոծում էր բօէրների բանակը, առանց որ և է կորուստի անգլիացիների կողմից: Ժուբեր ուղարկեց մէկ գերի օֆիցեր և 9 վիրաւորված զինուորներ փոխելու 8 բօէրների հետ:

Գեներալ Բրօլքերտ յարձակում գործեց թշնամու վրա Լէդի-Սմիտի հարաւ-արևմուտքից: Ճակատամարտը տևեց մի քանի ժամ. անգլիացիների կորուստները չնչին են: Ռմբակոծութիւնը շարունակվում էր երէկ: Այսօր շատ ռումբեր ընկան քաղաք: Վիրաւորվածների դրութիւնը լաւ է:

ԿՕԼԷՆԶՕ: Հոկտեմբերի 21-ին: «Րէյտէրի գործակալութիւն»: Այսօր բօէրները սկսեցին յարձակում գործել. նրանք եկան Լէդի-Սմիտի կողմից, դրեցին թնդանօթները և շուտով կրակ բաց արին դէպի Լէդի-Սմիտի հիւսիսային կողմը և Կօլէնզօի հարաւային կողմը: Բօէրները գործում են մեծ թնդանօթներով և որովհետև նրանք շատ հեռու են նետում ռումբերը, այդ պատճառով բոլոր ուժերը ընկնում են քաղաքը: Առաւօտեան եկան Լէդի-Սմիթից պօստային և ուրիշ գնացքներ: Գնացքների վրա թնդանօթներ էին արձակում բօէրները, ոչ մի վնաս չը հասցնելով նրանց: Կօնդուկտօրները հաղորդեցին, որ բօէրները ունեն ոչ միայն ժաուզեբեան հրացաններ, այլ և Նօրդէնֆէլդի արագաձիգ թնդանօթներ:

ԼՕՆԴՕՆ: «Daily Telegraph» լրագիրը հաղորդում է, որ չորեքշաբթի դուրս եկաւ Լէդի-Սմիթից երկաթուղիական գնացքը փախստականներով, որովհետև պատերազմող կողմերը պայմանաւորվեցին դադարեցնել թշնամական գործողութիւնները մինչև երեկոյեան 11 ժամը:

26 հոկտեմբերի

ԲՐԻՒՍՍԷԼ: «Վօլֆի գործակալութիւն»: Լէդի-Սմիթից այստեղ ստացված տեղեկութիւնների համեմատ, այստեղ մեծ թերահաւատութեամբ են վերաբերվում այն տեղեկութեանը, թէ հինգշաբթի օր Լէդի-Սմիթի մօտ անգլիական զօրքերը յաղթութիւն են տարել: Ընդհակառակն, ասում են, որ Լէդի-Սմիթի և Կօլէնզօի ռմբակոծման պատճառով, անգլիական բատարէանները, որոնք դրված էին Տուգէլի գետի վրա եղած կամուրջը պաշտպանելու համար, հինգշաբթի բօէրները լռեցրին և կամուրջը պաշտպանելու համար ուղարկված զօրքը ստիպված էր շտապով յետ քաշվել, որովհետև բօէրները գրաւեցին Լէդի-Սմիթից յետ քաշվելու գծի վրա տիրապետող կէտերը: Փախչող զօրաբաժինը ստիպված եղաւ հարաւային ճանապարհով գնալ, որը, սակայն, նոյնպէս բօէրների ձեռքումն էր: Նատալում չեն կասկածում, որ զօրաբաժինը կտրված է և ընկել է բօէրների ձեռքը, որովհետև Դուրբանում ևս դրա մասին ոչինչ յայտնի չէր: Լուր էր պտտում նոյնպէս, որ ուտեստի պաշարները և բերդապահ զօրքի ռազմամթերքները Լէդի-Սմիթում համարեա սպառված են և թէ անկարելի է այլ ևս կերակրել զօրքը:

ՊԱՐԻԶ: Խրիստեան Էստէրհազիի դանգատը մայոր Էստէրհազիի դէմ խարդախութիւնների մասին այսօր քննվում էր ուղղիչ դատարանում: Բացակայ մայոր Էստէրհազի դատապարտվեց երեք տարվայ բանտարկութեան և փողերը վերադարձնելուն:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.

Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և հեարդային հ.

Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1¼—2 ժ. ներքին և միասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ.

Ա. Ն ՇՊԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեքտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ—քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խխի, արեան և այլն:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Օ. Տ. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—պարապում է տանը ծաղկահատութեամբ, բժշկական մարմնամարզութեամբ և մարզելով. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
45—150 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՆ

տալիս է ընտանիքներում մասնաւոր դասեր հայկական ազգային և ժողովրդական երգերի.
Разъѣзжая № 9. д. Поповой, близъ памятника Воронцову. 2—5

Լոյս տեսան
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
1900 Թ.
ԾՈՑԻ և ՊԱՏԻ (Շիրակ)
Օրացոյցները:

ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑԸ զարդարված է մի քանի հայ գործիչների պատկերներով. ունի նոր յաւելուած, ընդարձակ բժշկարան, հարուստ երազահան և նոր զուարճալի վիճակարան:

—

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԻ մէջ կան՝ քարոզական խրատներ, նոր ծիծաղաշարժ առակներ՝ Մօլլա-Նասրէդդինից, Դալի-Քէչիչից, Պըլըպուղուց, այլև ժողովրդական առածներ, գիւղական լէլէներ, ընտիր բանաստեղծութիւններ, ժողովրդական երգեր, հայոց և եկեղեցական պատմութիւնից հատուածներ, զուարճալի պատմութիւններ, բժշկական, տնտեսական, արհեստագիտական և այլ օգտակար ու հետաքրքիր տեղեկութիւններ:

Գները { Ծոցինը —20 կոպէկ
Պատինը—50 կոպէկ

Գումարով գնողներին լինում է զիջում:
Դիմել՝ Александрополь, Карапету Апиняну կամ Alexandrople, Karapet Apinian (Caucase).
1—20

Լոյս տեսաւ
ԷՄՄԱՆՈՒԷԼ ՔԱՀ. ՆԱԶԱՐԵԱՆԻ
„Ընտիր Հատուածներ“
Ա. մասը—Արձակ
Չորրորդ տպագրութիւն
Գինը՝ 1 ր., զուժարով՝ 80 կոպ.
Ծախվում է Կենտրոնական գրավաճառանոցում:
(Հ.) 2—5

Վաղուց է որ փափագ ունեցած եմ 4—5 տարեկան մի որբ տղայ որդեգիր ունենալ. սրանով կը խնդրեմ յարգոյ հասարակութեան, որ եթէ գիտցողներ կան այդպիսի որբի մը մասին, բարեհաճեն ինձ յայտնել: Վօրօնցօվսկայա փողոց, ալիւրի մէյդանի մօտ, սրճարան «Եալտա», Խաչատուր Ցակօբով: 2—5

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ: Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.:



ՆՈՐ ՄԻՋՈՑ
մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը: Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց
ԶՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, ժուները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն: Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում: Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բագւում. նաև Միքայէլեան կամուրջի վրա, Գապօվի և Արիստակօվի դեղատներում: Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով: 17—100

Հ. Աւետիք Կոյլաւի
ԳԵՐՄԱՆԵՐԷՆ-ՀԱՅԵՐԷՆ ԱՄԵՆԱՅԵՑՏՆԻ
ԲԱՌԳԻՐՔԸ
1667 էջ, գինը, 10 ռուբլի, ծախվում է 5 ռուբլիով Ա. Խուդավերդեանի մագազինում, Գօլօվինսկի պրօսպէկտի վրա: Օտար քաղաքացիք պէտք է վճարեն 50 կոպ. պօստային ծախս, իսկ վերադիր վճարով պահանջողները պէտք է ուղարկեն 2 ռուբլի: 11—15

Շուտով գալու է
ԱԼԲԵՐՏ ԼՕՐԵՆՑ
և մօտ օրերս ցոյց կը տայ մի շատ հետաքրքիր փորձ: Անզգայ է դարձնում նա թէ իր և թէ կենդանիների մարմինը, այնպէս որ մարմնի կտրված տեղերը կամ ծակծկելը ոչ մի ցաւ և վնաս չէ առաջացնում: Մանրամասնութիւնները և սէանսի օրը կը յայտարարվի առանձին:
2—2 Կառավարիչ՝ Լ. Նէմէտտի

ԲԺՇԿ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
Վերանորոգել է հիւանդների ընդունելութիւնը բկի, կոկորդի, քթի և ականջի հիւանդութիւնների համար իր նոր բնակարանում, Սօլօլակ, Սերգիեվսկի փող., տ. Ծովիանովի: 5—10

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ
Անդրէաս Տէր-Մարուքեան, որ գտնւէ Պարիզում, ընդունում է իր արհեստանոցի մէջ պատուէրներ՝ արձան, կիսարձան և դիմագիծ շինելու: Հասցէն Paris, rue Campagne 1-ve № 9. Andreas Ter-Maroukian. 3—3

ԲԱԳՒՈՒՄ
Բացված է ներկայ ուսումնական տարվայ սկզբից
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
ՅԱԿՈՎԲ Յ. ԹԱԴԷՈՍԵԱՆՑԻ
(Ներսիսեան դպրոցի նախկին հոգաբարձու)
Ընկերակցութեամբ ուսուցիչ պ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԳԱԼՍՏԵԱՆԻ
(քարտուղարի Բագուի հայոց Մարդասիրական ընկերութեան)

Աշակերտներ ընդունվում են երթեւեկ, կիսագիշերօթիկ և գիշերօթիկ՝ 7 տարեկան հասակից: Դպրոցի նպատակն է պատրաստել երեխաներին կլասիկական գիմնազիա և ռէալական դպրոց մտնելու համար: Ուսումը սկսված է սեպտեմբերի 6-ից:

Պայմանները իմանալու համար դիմել ուսումնարան՝—Տէլէֆօննայա և Ստանիսլավսկայա փողոցների անկիւն, տուն Եղիազարովի: 7—10

Ի գիտութիւն Թիֆլիսի հասարակութեան

Այն հետաքրքրութիւնը, որ ցոյց է տալիս այստեղի հասարակութիւնը դէպի իմ ցուցահանդէսը, որ բաղկացած է **ԱՅՏԵԿՆԵՐԻ** ցեղի երկու



վերջին ներկայացուցիչներից, գեղարուեստօրէն դաշված ամերիկուհի ՄԻՍՍ ԷՄԵԼԻՆԻՑ ու նրա պատանի ՆԻԿԻՏԻՑ և ի նկատի առնելով հասարակութեան խնդիրքը՝ գները էժանացնել, որպէս զի այդ հետաքրքիր ցուցահանդէսը մատչելի դարձնի նաև չունևոր դասակարգի համար՝

Ես պատիւ ունեմ յայտնելու ի գիտութիւն հասարակութեան, որ այս օրվանից գները բաւականին պակասեցրած են.

I-ին տեղը՝ 50 կոպէկի փոխարէն՝ միայն 30 կոպէկ.
II-րդ տեղը՝ 30 „ „ 20 կոպէկ.

Երեխաները մինչև 14 տարեկան և զինուորները վճարում են կէսը: Մի և նոյն ժամանակ յայտնում եմ ի գիտութիւն հասարակութեան, որ չը նայելով գների պակասեցնելուն, ցոյց կը տրվի բոլորը, ինչ որ առաջվայ գների ժամանակ: Որովհետև մի քանի հանգամանքներից ստիպված այդ **ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ** մնալու է այստեղ կարճ ժամանակ, ուստի խնդրում եմ յարգելի հասարակութեան շտապել այցելելու, որ բաց է առաւօտեան 11 ժամից, մինչ երեկոյեան 11 ժամը: Գօլօվինսկի պրօսպէկտ, տուն Արաֆէլովի: 4—6

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ
ШОКОЛАДЪ СІУ
ФАБР. С. СІУ и Ко. МОСКВА.

30—52 M. 35,967 (Հ)

ՀԱՅԹԱՅԹՈՂ
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ
ՊԱԼԱՏԻ
Ա. ՌԱԼԷ ԵՒ ԸՆԿ.
ՄՕՍԿՎԱ
ԾԱՂԿԱՋՈՒՐ
ՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՀՈՏԱՒԷՏ ՋՐԵՐԸ.
Սրուակը 60 կ. և 1 ռուբլի:
ԾԱՂԿԱՍԱՊՈՆ (բարձր տեսակից)
8 տեսակ հոտով, կտորը 20 կոպ.
ԾԱՂԿԱՅԻՆ ԳԼԻՑԵՐԱՅԻՆ ՍԱՊՈՆ
8 տեսակ հոտով, կտորը 20 կոպ.
ԹԱՒՇԱՅԻՆ ՊՈՒԴՐԱ
Արկղը 25 կոպ. և 50 կոպ.
Москва, 1) Пассажъ Солодовникова. 2) Тверская, д. Спиридонова. С.-Петербургъ, Невскій 18.
Նաև Ռուսաստանի յայտնի դեղատներում
M. 59808

Дозволено цензурою, Тифлисъ, 26 Октября 1899 г.
Типографія Грузинск. Т.—ва Большая Ванкская ул., № 27.